ԱԺ պատգամավորի չեն թույլատրել հատել Վրաստանի սահմանը

2009-06-20 17:25

Հունիսի 19-ին, ժամը 21-ի սահմաններում, երբ Հայաստանից մեկնող խումբը, որի կազմում են եղել ՀՀ ԱԺ ՀՀԿ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավոր, «Ձավախք» հայրենակցական միության նախագահ **Շիրակ Թորոսյանը**, վարչապետի նախկին խորհրդական **Ստեփան Մարգարյանը**, «Հզոր Հայրենիք» կուսակցության նախագահ **Վարդան Վարդապետյանը** և ԱԺ նախկին պատգամավոր **Վահե Հովհաննիսյանը,** չի կարողացել ամբողջ կազմով մուտք գործել Վրաստան:

Սադախլոյի անցակետում վրացական սահմանապահները նրանց տեղեկացրել են, որ ԱԺ պատգամավոր Շիրակ Թորոսյանին արգելված է Վրաստան մտնել:

Հայաստանից մեկնած խմբի անդամների բոլոր ջանքերը, Հայաստանի և Վրաստանի դիվանագիտական խողովակներով հարթելու միջադեպը, եղել է անարդյունք: Խմբի մնացած 3 անդամների համար նման խոչընդոտ չի ստեղծվել, բայց ի նշան բողոքի, նրանք միասին ետ են վերադարձել:

Տեղեկացնենք, որ հայկական խումբը պետք է մասնակցեր «Նաումանի» անվան հիմնադրամի նախաձեռնած միջոցառմանը, որի շրջանակներում հանդիպումներ պետք է տեղի ունենային Վրաստանի արտգործնախարարության, Ռեինտեգրացիայի նախարարության, հասարակական կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչների հետ: Քննարկումների թեմաներն էին Հայ-վրացական հարաբերությունները՝ մասնավորապես Վրաստանի ազգային փոքրամասնությունների, տարածաշրջանային ինտեգրացիայի հետ կապված խնդիրները:

Մեր տեղեկություններով, միջադեպի առնչությամբ, Հայաստանում Վրաստանի դեսպանի պաշտոնակատարին ՀՀ արտգործնախարարությունից ներկայացվել է բողոքի նոտա:

Նշենք նաև, որ օրերս վրացական իշխանությունների կողմից արգելվել է Ախալցիխեում անցկացնել մեծանուն հայ նկարիչ **Վարդգես Սուրենյանցի** ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումները:

7or.am